**1451.** *ԽԱՉՔՍՐ, կանգնած պատվանդանի վրա, գյուղից հյուսիս-արևմուտք, կես կիլոմետր հեռու «Կլոր գարի» գագաթին. ճակատին ուռուցիկ տառերով 3 տող.*




ԵՍ Մ˪ԻՐ˩Ջ˪Ա˩Ճ˪Ա˩ՆՍ, ԱԿՆ|ԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ,| ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ։

Ծանոթ. *Խաչքարի ոճը* XV—XVI *դարերի է։*

## ԲԱՍԱՐԳԵՉԱՐ (ՀՆՈՒՍ՝ ՎԱՍԱԿԱՇԵՆ)

*Գյուղի հին անունը եղել է Վասակաշեն և 10 չափ հարկով, ըստ Ստ. Օրբելյանի ցուցակի, որից հետևում է, որ միջակ գյուղերի շարքումն է, ըստ իր մեծության։ Այժմ գյուղում պահպանված ամենահին հուշարձան-խաչքարն ունի 1426 թվականը (1422) և գտնվում է գերեզմանատան մեջ, բայց Սմբատյանը հիշատակում է եկեղեցու մոտ մի խաչքար, որն ունեցել է ։Զ։ թվականը։*

*Գյուղում արձանագրություն ունեցող հուշարձաններ երկու վայրում են.*

Ա. Գերեզմանատունը *գտնվում է գյուղի արևելյան եզրին, շատ ընդարձակ է, բայց նոր բացված խճուղիներն անցնելով նրա միջից՝ բաժանել են այն երեք անջատ մասերի, որոնցից երկուսի մեջ կան հին թվականներով գերեզմանական հուշարձաններ։ Այդ մասերը նշանակել ենք Ա և Բ տառերով։*

Բ. Ս. Աստվածածին եկեղեցու բակ. *Ներկա եկեղեցին բոլորովին նոր է, շինված* XX *դարի սկզբներին՝ հնի վայրում, այն հիմնովին քանդվելուց հետո։ Այդ պատճառով էլ նրա ներսում և շրջապատում եղած գերեզմանական հին հուշարձանները վնասվել, կորել և մասամբ էլ տեղահան են եղել։ Մնացածներից երևում է, որ բակում եղել է ընդարձակ գերեզմանատուն։ Խախտված խաչքարերը հավաքված և շարված են եկեղեցու պատերի տակ, մի քանիսն էլ կանգուն են իրենց հին տեղերում։ Թե՛ խաչքարերը և թե՛ տապանաքարերը գեղաքանդակ և շնորհալի վարպետների գործեր են, որոնցից մեկի անունն է պահպանվել՝ Մանվել նկարիչ (№ 1469—1470)։ Թվական ունեցող ամենահին հուշարձանն այստեղ ունի 1512 թվականը։*

*Ներկա ժողովածուում այս գյուղից ամփոփված են 29 արձանագրություն, որոնցից միայն 6-ն են նախկինում հրատարակված եղել։*

### Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

**1452.** *ԽԱՉՔԱՐ, կանգնած է գերեզմանատան արևմտյան մասում, ճակատին և շրջանակներին 5 տող.*




ԱՅՍ ԱՐՁԱՆ ՆԵՐԿԵ|ԱԼ ԱՐԵԱՄԲՆ ·ՔԻ. Ի ԲԱ|ՐԵԽԱԻՍ ՀՈԳ|Ո ՄՈՒՐԱԴԻՆ. ԹՎ. ։ՊՀԴ։ (1425)։

***1453. ԽԱՉՔԱՐ**, պարզ, կանգնած նախորդին մոտ, ճամփի եզրին. շրջանակներին՝ 2 տող.*



ԵՍ ՊՈՒՏԱԽՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԲԱ-ՐԷ|ԽԱՒՍ ՈՐԴՈՑ ԻՄ ՄԱՐԳԱՐԻՆ ԹՎ. ՋԿԹ: (1520):

***1454. ԽԱՉՔԱՐԵՐ**, երեք հատ, կանգնած են իրար կից, նախորդների մոտ. տապանագրերը միայն երկուսի վրա.*

***Ա. ՔԻՎԻՆ ԵՒ ԽԱՉԻ ՏԱԿԻՆ**, 5 տող.*



ԵՍ ԹԱԹՈՍ ԼԵՐԵՑՍ. ԿԱՆԿՆԵՑ|ԱՒ ԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄ ՓԱՆՈՍԻՆ| ԵՒ ԵՂ-ԲԱՒՐ ԻՄ ԱՄԻՐ ԲԷԿ|ԻՆ. ԹՎ. ՋՂԷ: (1548):

***1455. Բ. ՔԻՎԻՆ**, 2 տող.*



ԵՍ ԹԱԹՈՍ ԼԵՐԵՑՍ. ԿԱՆԳՆ|ԵՑԱՒ ԽԱՉՍ ՄԱՒՐ ԻՄ ԴԱ. . .

Ծանոթ. *ժամանակակից նախորդին:*

***1456. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, մեծ, խորանարդաձև, հարավային կողին ցլանման կենդանի, իսկ ետևը շրջանակ՝ մեջը խաչ. խաչի շուրջը և կենդանու ոտքերի արանքում 5 տող.*



ԹՎ. ՌՂԱ: (1642). ՄԵԼԻՔ ԱԾԱՊԻՆ, [ԻԻ]Ր ԿՈՂ|ԱՑԿԻՑ| ՓԱՇԻԿԻՆ:

Ծանոթ. *ԱԾԱՊ անունը Աստուածապով անվան աղավաղումն է։*

***1457. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, օրորոցաձև, մեծ, հարավային երեսին երկու հեծյալ որսորդներ, արանքում եղջերու՝ ոտքերի տակ վիշապ. շրջանակներին 4 տող.*



ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵ|ԽՕՍ ՄԻՐ-ՋԱԽԱՆԻՆ. ՈՐ Է ՈՐԴԻ ՊԱՂ|ԻՆ. ԻՇԵՑԷՔ| Ի ՔՍ.| ԹՎ. ՌՃԺԱ: (1662):

Լալաեն. 297.

**1458.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, մեծ, տափակ, ընկած է ճամփի վրա. երեսին 5 տող.*

ԱՅՍԷՀՆԱԳ
ԻՍՏԻՍԱՅԽ
ՂԻՆՈՐԴԻ
ԽՉԱՏՐԻՆ
ԹՌՃԿ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ԻՍԱՅԽ|ԱՆԻՆ,
ՈՐԴԻ| Խ⌊Ա⌋ՉԱՏՐԻՆ.| ԹՎ. ։ՌՃԿ|։
(1711)։

**1459.** ***ԽԱՉՔԱՐ**, պարզ, ընկած է նախորդի մոտ. քիվին 2 տող.*

· · · ՈՂՈՐՄԻԱԼԷԳՍԱՆՈՍԻՆ
ԵՒԻՒՐԿՈՂԱԿԻ Ց ԲԷԿ

⌈ԱԾ⌉ ՈՂՈՐՄԻ Ա⌊Է⌋ԳՍԱՆՈՍԻՆ| ԵՒ
ԻՒՐ ԿՈՂԱԿԻՑ ԲԷԿ . . .։

Ծանոթ. *Արձանագրության վերջին մասը ջարդված չէ. Բեկ անունը կրճատ է, կան* Բեկխաթուն, Բեկիշան *և այլն իգական անուններ։*

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

**1460.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, տափակ, երեսին գավազան, գտնվում է այս գերեզմանատան արևմտյան մասում, երեսին 11 տող.*

ԱՅՍԷՀ ԱՆԿԻՍՏ
ՊԱՐՈՆՎԱԽԱԽ
ԻՆԿՈՂԱԿԻՑՊԱՐ
ՈՆՀԱԽՆԱԶԱՐԻՆ
ՄԱՅՐՆԷՆԱՂՏԻՆ
ՓՈԽԵՑԱՒԱՌՔՍ
ԷՆՏԱՐԻՆ ՈՐՇԱՀ
ԱՊԱԶՆԹԱՒԵՐԿ
ԻՐՍՈՎ ԿԱՐԴԱՑ
ԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԻ
ԹՎՌԾԲ ԷՐ

ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ| ՊԱՐՈՆ ՎԱԽԱԽ|ԻՆ, ԿՈՂԱԿԻՑ ՊԱՐ|ՈՆ ՀԱԽՆԱԶԱՐԻՆ,| ՄԱՅՐ ՆԷՆԱՂՏԻՆ.| ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ՔՍ.| ԷՆ ՏԱՐԻՆ՝ ՈՐ ՇԱՀ ԱՊԱԶՆ ԵԿԱՒ ԵՐԿ|ԻՐՍ. ՈՎ ԿԱՐԴԱՑ| ԱԾ
ՈՂՈՐՄԻ ԱՍԻ. ԹՎ. ։ՌԾԲ։ ԷՐ (1603)։

Ծանոթ. Երկիրս *բառից առաջ* եկաւ *գնում ենք ենթադրաբար, բնագրում ջնջված և նոր գծեր են արված։*

**1461.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, տափակ, նախորդի մոտ. երեսին 5 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏՊԱՐՍԵՂ
ՔՀԱՆԻՆՈՐԴ
ԻՈՒԼՈՒՍԻՆ
ԹՌՃԼԵ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ՊԱՐՍԵՂ| ՔԱՀԱՆԱԻՆ,
ՈՐԴ|Ի ՈՒԼՈՒՍԻՆ| ԹՎ. ։ՌՃԼԵ։ (1686)։

**1462. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, դանվում է դերեզմանատան մեջին մա-սում. հյուսիսային կողին՝ կենցաղային տեսարան, հարավայինին՝ խոյանկներ. շրջանակներին 5 տող.*

ՍԲԽԱՉՍԲ
ԱՐԷԽԱՒՍՄԷԼՔԳԿԻՆՈՐԴԻ
ՊԱՐՈՆԱՍ
ԼԱՆԲԷԿԻՆ
ԹՌՃ Լ
Թ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՄԷԼՔԻ ԳԷ-ԿԻՆ, ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ԱՍԼԱՆ ԲԷԿԻՆ.
ԹՎ. ՌՃԼԹ (1690)։

**1463. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տափակ, նախորդի մոտ, երեսին 5 տող.*

ԱՅՍԷՀ
ԱՆԴԻՍ
ՏՂԱՐ
ԱՅԳԱ
ՁԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՂԱՐԱՅԳԱՅՁԻՆ։

**1464. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *փոքր, օրորոցաձև, հարավային կողին երկու պարողներ, դավ, կերակուրի ամնակ ու հաց. արանքներում թվականը ուռուցիկ տառերով. հյուսիսային կողին տապանագիր. 3 տող.*

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽ
ԱՍ ԱՄԻՐԳԿԻՆ
ՈՐԴԻՊԱՐՈՆԱՂԻՆ
ԹՎ ՌՃ Լ
Թ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱՄԻՐԳԷԿԻՆ, ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ԱՂԻՆ ԹՎ. ՌՃԼԹ (1690)։

II. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ

**1465. ԽԱՉՔԱՐ,** *գեղաքանդակ, հենած է եկեղեցու արևելյան պատին, խաչի թևերի շուրջը և կողին.*

Թվ ՋԱ

ԿԱՄԱ
ՒՆԱՅ
ԵՍՅՈՎԼԱ
ՆԷՍԿԱ
ՆԿՆԵՑ
ԻԽԱՉ
ՍՓՐԿ
ՈՒԹԵ
ԱՆՀԱ
ՒՐՆԻՄ
ԸՌԸՍ
ՏԱԿ
ԷՍՔ
ԱՀԱՆ
ԱՅԻՆ
ՈՐԴ
Ի ՄԻ
ՐԱՆ
ՇԻՆ
ԹՌՆ
ԱՎԼԱ
·ԱՅ
ԻՇԵՑ
ԷՔ Ի
ՔՍ

ԹՎ. Ջ (1451). ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ՅՈՎԼԱՆԷՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՒՐՆ ԻՄ ԸՌԸՍՏԱԿԷՍ ՔԱՀԱՆԱՅԻՆ. ՈՐԴԻ ՄԻՐԱՆՇԻՆ, ԹՈՌՆ ԱՎԼԱՆԷՍԱ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ։

Ծանոթ. *Սկզբի մասում ԿԱՄԱՎՆ ԱՅ-ի փոխարեն գրված է ԿԱՄԱՒՆ ԱՎ. գրչի սխալ է. վերջին մասում՝ ԹՈՌՆ ԱՎԼԱՆԷՍԱ կասկածելի։*

1466. *ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, նախնական տեղում, կանգնած եկեղեցու հարավային պատի մոտ. թևերի շուրջը 2 տող.*




Թվ.| :ՋԿԱ: (1512):

1467. *ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, հենած եկեղեցու հարավային պատին. քիվին, թևերի տակ և հյուսիսային կողին.*



ԵՍ ԿԻՐ[Ա]Կ[Ո]Ս ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄ ԱՒԱՆԷՍԻՆ.| Թվ. :ՋՂԷ: (1548):| ԷՍ ՄԱՍՍ| ՎԷԼԻՃԱ|ՆԻՆ Է:

Լալաեն. 298 *(միայն թվի մասը):*

1468. *ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, կանգնած է եկեղեցու արևելյան պատի մոտ, քիվին և թևերի արանքում 3 տող.*



ՍԲ. Խ[Ա]ՉՍ ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈՑ ՍԷ|ՎԱՏԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻՆ ԻՒՐՈՑ.| Թվ. :ՌԲ: (1553):

1469. *ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, կից նախորդին հյուսիսից, քիվին, թևերի տակ և հյուսիսային կողին 13 տող.*



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԳՈՒԼԱՂԻՆ. ԱՄԷՆ:| ԱՍՏՈՒԾՈՎ ՄԵ|Ք ՄԻՐՁ|ԱՊԷԿՍ ԿԱՆԿՆԵՑ|ԱՔ Խ[Ա]ՉՍ Փ|ՐԿ[ՈՒ]ԹԻ. ՀՈԳ|ՈՑՆ ԳՈՒ|ԼԱՂԻՆ, Է|Ր ՄԵՐ ԿՈ|ՂԱԿԻՑ. Թվ. :ՌԺԵ: (1566): ՄԱՆՎԷԼ:

Ծանոթ. *Նախորդի հետ միևնույն գերդաստանին են պատկանում: Վերջին Մանվել անունը վերաբերում է վարպետին, խաչքարի կազմողին:*

Լալաեն. 299 *(միայն թվի մասը):*

1470. ԽԱՉՔԱՐ, մեծ, գեղաքանդակ, կանգնած է եկեղեցու հարավում, քիվին մեկ տող ուռուցիկ և ծաղկազեր, ապա հարավային կողին՝ փորագիր 20 տող.



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՔԱՋ ՋԱԻՀՐԱՊԻՆ. ԱՅՍ Է ՆՇ|ԱՆ ՍԲ. ԱՐ|ԱՐՉԻՆ, ՃՐ|ԱԳ ՀՈԳՈ|ՅՆ ՔԱՋ| ՋԱԻՀՐԱՊ|ԻՆ. ԿԱՆԿՆ|ԵՑԱԻ ՁԵՌ|ԱՄԲ ԻԻՐ| ՀԱԻՐՆ Ո|ՎԱՆՆԻՍԻ|Ն, ԻԻՐ ԾՆՈ|ՂԱՑ ՓԱՇ|ԱՅԽԱԹ|ՈՒՆԻՆ. ՅԻՇԵՑԷ|Ք Ի ՔՍ.| ՄԱՆՎԷԼ. (ՆԿԱՐԻՉ):

Ծանոթ. *Ջալալյանցը և Ալիշանն ունեն միայն առաջին տողը, բայց նաև ՙՋԷ՚ թվական. Սմբատյանցն ու Լալայանը լրիվ՝ նաև ՙՋԷ՚ թվական: Տեղում ոչ մի թվական գոյություն չունի, թյուրիմացություն է:*

*Արձանագրության վերջում գրված փակագրերից առաջինը ստույգ* Մանվել *ենք վերծանում, իսկ երկրորդը, հավանաբար՝* նկարիչ Մանվելն *ստորագրել է նախորդ արձանագրության տակ, բաց գրությամբ և կազմող է (1566):*

*Հրատ. Ջալալյանց, II, 119: Ալիշան, [illegible]: Սմբատյանց, 604: Լալայան, XIX, 11:*
Լուսանկ. 300

1471. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, մեծ, գտնվում է նախորդ խաչքարի դիմաց. հարավային կողին հեծյալ և հետիոտն որսորդներ (վերջինիս ձեռքին լարած աղեղ), որոնց արանքում մեծ եղջերու: Հյուսիսային կողին երեք խորաններ, առաջինի մեջ երկլարանի սազ նվագող. կողքին հաց և ուտելիքի պնակ. կենտրոնի խորանում մի մարդ՝ ձեռքին մեծ գավ. երրորդ խորանում մեծ կճուճ՝ վրան դրված գավ. շրջանակներին 4 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՔԱՋ| ՋԱԻՀՐԱՊԻՆ. ՍԱ ԷՐ ՈՐԴԻ ՈՎԱՆԷՍ ԱՂԻՆ. ՓՈԽԵ|ՑԱԻ ՔՍ. ՆՈՐԻՆ ԴԻԱՌՆ ՍՈԻՔ| ԵԴՈՂ ՓԱՇԱՅԽԱ|ԹՈՒՆԻՆ:

1472. *ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, կանգնած է Ջոհրապի խաչքարին կից՝ հարավից. քիվին 1 տող.*



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՈՎԱՆԷՍ ԱՂԻՆ:

Ծանոթ. *Բաց Ջոհրապի հայրն է անշուշտ և նրանից հետո վախճանված։*

*Ջալալյանցը, Սմբատյանցն ու Ալիշանը ավելացրել են նաև Ջոհրապի մոր՝ Փաշախաթունի անունը և նշանակել ։ՋԸ։ թվականը, որը գոյություն չունի։*

Հրատ. Ջալալյանց, 119։ Ալիշան, 91։ Սմբատյանց, 604։
Լուսանկ. 301

**1473. ԽԱՉՔԱՐ,** *մեծ, գեղաքանդակ, տեղից խախտված, դրված է եկեղեցու հյուսիսային պատի տակ, կողքից, քիվին՝ մեկ տող ուռուցիկ տառերով, ապա հարավային կողին, եռագիծ տողերի մեջ փորագիր՝ 15 տող.*

ԱԾ ՈՂՈՐՄԻ ՈՀԱՆԵՍԱՂԻՆ

ԱՎ.ՄԵՔԱՆ
ԱՐԺԱՆԾԱ
ՔԻՈՀԱՆԷ
ՍՈՐԴԻՈՎ
ԱՆԷՍԱՂԻ
ՆԱՌԱՋՆ
ՐԴՏԵՂՈՅՍ
ԿՆԿՆԵՑԱՔ
ՍԲՆՇԱՆՔ
ՍԲԱՐԵԽԱՍ
ՄԵՁԵԻԿՈՂ
ԱԿՑԻՆՄԵ
ՐՊԱՐՈՆԽ
ԱՆԱՂԻՆ

ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՈՀԱՆԷՍ ԱՂԼԻՆՋ. ԱՍՏՈՒԾՈՎ. ՄԵՔ ԱՆ|ԱՐԺԱՆ ԾԱՌԱ| ՔՐԻՍՏՈՍԻ ՈՀԱՆԷ|Ս, ՈՐԴԻ ՈՎ|ԱՆԷՍ ԱՂԻ|Ն, ԱՌԱՋՆՈ|ՐԴ ՏԵՂՈՅՍ,| ԿԼԱՅՆԿՆԵՑԱՔ| ՍԲ. ՆՇԱՆՔ|Ս ԲԱՐԵԽԱՒՍ| ՄԵԶ ԵՒ ԿՈՂ|ԱԿՑԻՆ ՄԵ|Ր ՊԱՐՈՆ Խ|Ա-ՆԱՂԻՆ:

Ծանոթ. *Բաց Ջոհրապի եղբայրն է սա և նրանից բավական ուշ վախճանված պետք է լինի։*

Լուսանկ. 302 *(միայն առաջին տողը)։*

**1474. ԽԱՉՔԱՐ,** *երկու կտոր եղած, հենած է եկեղեցու արևելյան պատին, քիվին 1 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻՇԱՀՈՒՄԱՂԻՆ:ԹՌԺ

ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՇԱՀՈՒՄ ԱՂԻՆ.
ԹՎ. :ՌԺ: (1561):

**1475. ԽԱՉՔԱՐ,** *հենած է եկեղեցու հյուսիսային պատին. քիվին, թևերի շուրջը և ստորին մասում 4 տող.*

ՔՀՅ ՊԵՏ: ՏՐՈՎԱՆԷՍ

ԹՎ ՌԻԴ

ԱՅՍԷՀԱՆԳԻ
ՍՏՈՎԱՆԷՍՔՀԻ

ՔԱՀԱՆԱՅ ՊԵՏՐՈՍ: ՏՐ. ՈՎԱՆԷՍ:| ԱՅՍ Է ՀԱՆԳԻ|ՍՏ ՈՎԱՆԷՍ ՔԱՀԱ-ՆԱՅԻ.| ԹՎ. :ՌԻԴ: (1575):

***1476. ԽԱՉՔԱՐ,*** *հենած է եկեղեցու հյուսիսային պատին, քիվին, թևերի շուրջը և ստորին մասում՝ ուղղակի և փորագիր 4 տող.*

ԱՅՍ ԽԱՉՍ ԱՐՁԱՆԱՑԵԱԼ ԱՄԲՆ ՄԱՐԱՉԱԿԱՆ ԿԱՆ
ԿՆԵԱԼ ՎՍՆ ՅՈՀԱՆՍ ՎԱՐԴՊՆ ՀՈԳՈՑՆ ՓՐԿՈՒԹԵ
Թվ. ՌԽԷ
ՍԲ ՆՇՆՍ ՈՒԼ ՈՒԽԱՆԻՆԷ

ԱՅՍ ԱՐՁԱՆ ԱԻԾԵԱԼ ԱՄԵԱՄ|
ԲՆ ՑԱՐԱՐՉԱԿԱՆ, ԿԱՆ|ԿՆԵԱԼ
Վ,ԱՅՍՆ ՅՈՀԱՆԷՍ Վ|ԱՅՐԴԱՅ-
ՊԵՏԻՆ ՀՈԳՈՑՆ ՓՐԿՈՒԹԵ.|.
Թվ. ՌԽԷ: (1598):| ՍԲ. ՆՇԱՆՍ
ՈՒԼՈՒԽԱՆԻՆ Է:

***1477. ԽԱՉՔԱՐ,*** *հենած է եկեղեցու հարավային պատին, քիվին 1 տող.*

ԱԾՈՂՈՐՄԻ ՏՐ ԱԾՅՏՈՒՐԻՆ    ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՏՐ. ԱՍՏՈՒԱԾԱՑՏՈՒՐԻՆ:

ԱՅՍՏԵՂ ՀՆՈՒՄ ԵՂԵԼ ԵՆ ՆԱԵՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***1478. ԽԱՉՔԱՐԻ*** *վրա, որը կանգնած է եղել եկեղեցու հարավում, Զոհրաբի խաչքարի մոտ.*

Աստուծով մեք Օհաննէս եւ եղբայրն իմ Դաւիթ կանգնեցաք զխաչերս
բարեխաւս ծնողաց մերոց. Ի թվ. ՌԸ: ՌԺ: (1559, 1561):

*Հրատ. Սմբատյանց, 604։ Լալայան, XIX, 12։*

***1479. ԽԱՉՔԱՐԻ*** *վրա, նախորդի մոտերքում.*

Այս է նշանգիրս որդւոյ Աւագխանին:

*Հրատ. Ջալալյանց, 119։ Ալիշան, 71։*

***1480. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ*** *վրա, որը դրված է եղել այժմյան եկեղեցու տեղում կանգնած նախկին եկեղեցու բեմի առաջ.*

Աստ հանգչի մարմին Սարգիս վարդապետի. ՌԻ: (1551):

*Հրատ. Սմբատյանց, 603։ Լալայան, XIX, 11։*

***1481. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ*** *վրա, նախորդի մոտ.*

Այս է հանգիստ Յովհաննէս վարդապետին, ՌԼԲ: (1583)[1]:

Ծանոթ. *Յովհանը Ծարեցին է, որ ունի «Պատմութիւն Աղուանից» մատյանը.*

*Հրատ. Սմբատյանց, 603։ Լալայան, XIX, 11։*

## ԱԶԱՏ ԳՅՈՒՂ (ՆԱԽԿԻՆՈՒՄ՝ ԱՂՔԻԼԻՍԱ)

*Գյուղի հին անունն անհայտ է (Սմբատյանցն ու Ջալալյանցն էլ նախկին անունը սխալմամբ Ղարաքիլիսա են հիշատակում)։ Ընդարձակ, սակայն ներկայումս ավերված գերեզմանատան մեջ պահպանված XIII դարի մի քանի խաչքարերն ապացույց են բնակավայրի հնությանը (դրանցից մեկը մենք գտանք՝ 1288 թ. արձանագրությամբ (№ 1288), մեկն էլ հիշատակում է Սմբատյանցը՝ ՉԽԴ։ թվականով և Շահնշահի որդի Հասանի անվան հիշատակումով[2]։*

*Գյուղամիջում կիսավեր վիճակում մնում են ս. Աստվածածին եկեղեցին և գավիթը։*

---

[1] *Սմբատյանցը նշում է, որ եկեղեցու շուրջը կային ՉՁ, ՉՊ և ՉՋ թվականով խաչքարեր, այժմ չկան։ Սմբատյանց, 604։*

[2] *«Գեղարքունիք», էջ 628։*